

Կ Ռ Ի Ա Ր Ա Ր Ը

(Մակարիմ Գոր'կի)

«Ուր Լրագրի» խմբագրատան մեծ լուսաւոր սենեակով ջղայնօրէն վազվզում էր յուզուած, զայրացած խմբագիրը և ձեռներում ձմրթելով հրատարակութեան նոր համարը՝ մէջընդմէջ գոռում ու հայհոյում էր։ Նա մի փոքրիկ անձնաւորութիւն էր՝ երկար ու մաշուած դէմքով, որ զարդարուած էր միւրուքով ու ոսկի ակնոցներով։ Մոխրագոյն անդրավարտիք հագած բարակ ոտիկներով բարձր թրխկթրխկացնելով՝ նա պտտւում էր հա պտտւում երկար սեղանի մօտ, որ դրուած էր սենեակի մէջտեղը և վրան թափթփած ձիւղուած թղթեր, սրբագրական սիւնեակներ և ձեռագրերի կտորներ։ Սեղանի մօտ, մի ձեռք նրա վրայ դրած և կթռնած, իսկ միւս ձեռով ճակատը սրբելով, կանգնած էր հրատարակիչը—երկարահասակ, լիք-լիք, միջին տարիքով մի չիկահեր մարդ, ձերմակ զուարթ դէմքին արհամարհական նուրբ ժպիտ՝ հետևում էր խմբագրին ուրախ, փայլուն աչքերով։ Մետրանպաժը (աւագ դրաշարը), դեղնած դէմքով և ներս ընկած կրծքով մի կոպիտ մարդ, կեղտոտ և հատակին ոչ համաչափ շագանակագոյն սերթուկով, երկչոտութեամբ կուչ էր եկել պատի մօտ։ Նա յօնքերը վեր էր բարձրացնում և աչքերը յառում առաստաղին, կարծես թէ մի բան էր յիշում կամ խորհում, և մի րոպէ յետոյ հիասթափուած՝ քիթը վեր էր քաշում և տխրութեամբ գլուխը կախում կրծքին։ Դրան մէջ ցցուած էր խմբագրական ցրիչի դէմքը. ամեն անգամ նրան հրելով մտնում ու նորից անյայտանում էին ինչ-որ մարդիկ մտաղբաղ և դժգոհ դէմքերով։

Խմբագրի ձայնը—չար, զրգռուած և հնչուն, երբեմն բարձրաձայնութեամբ էր մինչև ծկլթոյ և ստիպում էր հրատարակչին դէմքը կնճռոտել, իսկ մետրանպագին՝ վախեցած վեր թռչել։

—Ձէ, այս ախպիրսի ստորաքարչութիւն է։ Ես քրէական դատ կը բանամ այդ դարչելու դէմ... Սրբագրիչը եկել է։ Գրողը տանի,—ես հարցնում եմ—եկել է սրբագրիչը։ Ձէ, դուք մէկ երեւակայեցէք, թէ ինչ կը լինի այժմ. բոլոր լրագրերը մատի վրայ կ'առնեն մեզ։ Խայտառ-ռակութիւն է։ Ողջ Ռուսաստանում... Ես չեմ ներիլ այդ դարչելուն։

Եւ լրագիրը բռնած ձեռքը բարձրացնելով դէպի գլուխը՝ խմբագիրը տեղնուտեղը կ'ծկուեց, կարծես ցանկանալով լրագիրը փաթաթել գլուխը և այդպիսով պաշտպանել նրան ըսպասուող խայտառակութիւնից։

—Դուք նախ և առաջ դտէք նրան...—սառը կերպով ժրպտալով խորհուրդ տուաւ հրատարակիչը։

—Կը դը-գտնեմ-ը։ Կը դը-գտնեմ,—աչքերը փայլեցրեց խմբագիրը՝ նորից սկսելով վազել, և կրծքին սեղմելով լրագիրը՝ սկսեց անխնայ գզգզել այն։—Կը գտնեմ և նրա ճաշը կ'եփեմ... Այս սրբագրիչն ինչ եղաւ։ Հօ... ահա... Դէ, խնդրեմ չ'սորհ բերէք, յարգելի պարոններ։ Հը՛մ... արձձէ զօրաբաժինների հեզ հրամանատարներ... հա, հա։ Անցէք խնդրեմ... այ այդպէս։

Մէկը միւսի ետեից դահլիճն էին մտնում զրաշարները։ Նրանք արդէն գիտէին, թէ ինչ կայ, և նրանցից իւրաքանչիւրը պատրաստուում էր ստանձնելու մեղադրութիւնը գերը, ուստի նրանք բոլորն էլ իրանց կեղտոտ, արձձային փոշով թաթախուած դէմքերին արտայայտում էին կատարեալ անչարժութիւն և մի տեսակ փայտէ անդորրութիւն։ Նրանք խտուրտեմբ խմբուեցին դահլիճի մի անկիւնում։ Խմբագիրը կանգ առաւ նրանց առաջ՝ լրագիրը բռնած ձեռք մէջքին գնելով։ Նա նըրանցից հասակով փոքր էր, ուստի ստիպուած եղաւ գլուխը վեր բարձրացնել, որպէսզի նայէ նրանց երեսներին։ Նա այդ շարժումն արաւ չափազանց արագ, և ակնոցները յանկարծ թռան ճակատին. կարծելով թէ նրանք ընկնում են, նա օղի մէջ ձեռքը շարժեց նրանց բռնելու, բայց այդ ժամանակ նրանք նորից ընկան քթարմատին։

—Գրողը ձեզ...—կրճտացրեց նա ատամները։

Գրաշարների ազտոտ դէմքերին ուրախ ժպիտներ փայլեցին։ Մէկը խուլ ծիծաղեց։

—Ես ձեզ այստեղ եմ կանչել ոչ նրա համար, որ դուք ինձ ձեր ատամները ցոյց տաք,—զայրացած դուռաց խմբագիրը գունատուեց։—Կարծեմ բաւականաչափ խայտառակել էք թեր-

թը... Եթէ ձեր մէջ կայ մի ազնիւ մարդ, որը հասկանում է, թէ ինչ է լրագիրը, մամուլը... նա կ'առնէ, թէ ով է օտարը և այդ... Առաջնորդող յօդուածում... — Խմբագիրն սկսեց ջղայնօրէն շուռումուռ տալ լրագիրը:

— Ախր ինչ է եղել, — եկաւ մի ձայն, որի մէջ ոչինչ չէր լսուում, բայց սովորական հետաքրքրութիւնից:

— Ա՛: Դուք չը գիտէք: Դէ, ուրեմն համեցէք... ահա...

«Մեր գործարանային օրէնագրութիւնը մամուլին միշտ ծառայել է իբրեւ առարկայ տաք վիճաբանութեան... այսինքն անմիտ յիմարութեան և անհեթեթութեան ասման...» Ահա, դուք գոհ էք: Չի բարենաճիլ նա, ով աւելացրել է այս «ասման»... — և գլխաւորը — ասման. ինչպէս գրական է և սրամիտ. — Է, ձեզնից ով է այս «անմիտ յիմարութեան և անհեթեթութեան» հեղինակը...

— Յօդուածն ումն է: Ձերն է: Է՛, դուք էլ այն բոլորի հեղինակն էք, ինչ որ նրանում դուրս է տուած, — հնչեց նոյն հանդարտ ձայնը, որ առաջ էլ էր հարցրել խմբագիրն:

Այդ յանդիմութիւն էր, և բոլորն ակամայ ենթադրեցին, որ այդ դէպքի հերոսը գտնուած է: Դահլճում մի շարժում ընկաւ. հրատարակիչը մօտ եկաւ խմբին, խմբագիրը ոտների ծայրերի վրայ բարձրացաւ՝ կամենալով գրաշարների գլխների վրայով նայել խօսողի դէմքին: Գրաշարները մի կողմ քաշուեցին: Խմբագրերի առաջ կանգնած էր մի թիկնաւէտ մարդ, կապոյտ բլուզով, չնչոտ դէմքով և ձախ քունքի վրայ դէպի վեր հիսուող մազի ոլորներով: Նա կանգնած էր՝ ձեռները խրած անդրվարտիքի գրպանները, և խմբագրի վրայ անտարբերութեամբ յառած գորշ, չար աչքերը՝ թեթև ժպտում էր գանգուր չէլ միտքի միջից: Բոլորը նրան էին նայում. — հրատարակիչը խստութեամբ կիտած յօնքերը, խմբագիրը զարմանքով և բարկութեամբ, մետրանպաժը — ծիծաղը բռնած ժպտալով: Գրաշարների դէմքերն արտայայտում էին և՛ ոչ աջող թազցրած բաւականութիւն, և՛ վախ, և՛ հետաքրքրութիւն...

— Այդ... հէնց դուք էք, — հարցրեց վերջապէս խմբագիրը՝ մատնանիչ անելով չնչոտ գրաշարին, և բազմախորհուրդ կերպով սեղմեց շրթուքները:

— Ես եմ... պատասխանեց նա՝ քմծիծաղելով չափաւոր դօրէն և վերաւորիչ կերպով:

— Ա՛-ա... չափ գեղեցիկ: Ուրեմն այդ դուք էք: Դէ ինչի համար էք դուք աւելացրել, թո՛յլ տուէք իմանալ...

— Բայց միթէ ես ասացի, որ ես եմ աւելացրել, — և գրաշարը նայեց իր ընկերներին:

—Այդ նա է, ճշմարիտ, Միտրիյ Պաւլովիչ.— դարձաւ մետր-անպաժը խմբագրին:

—Է՛, որ ես եմ, ուրեմն ես եմ,—մի պարզամտութեամբ համաձայնեց գրաշարը և ձեռքը թափ տալով՝ նորից ժպտաց:

Կրկին լոնցին բոլորը: Ոչ որ չէր սպասում այդպիսի շուտափոյթ և խաղաղ խոստովանութեան, և այդ բոլորի վրայ ազդեց իբրև անսպասելի բան: Մինչև անգամ խմբագրի զայրոյթը տեղի տուաւ մի բոպէ զարմանքի: Չեչոտի շուրջը գտնուող տարածութիւնը լայնացաւ, մետրանպաժն արագ հեռացաւ սեղանի մօտ, գրաշարները մի կողմ քաշուեցին...

—Դու այդ դիտմամբ ես արել, որոշ նպատակով, այնպէս չէ, հարցրեց հրատարակիչը ժպտալով և չեչոտին զննելով իր կլոր աչքերով:

—Հաճեցէք պատասխանել,—գոռաց խմբագիրը՝ ճիւղտուած թերթը թափ տալով:

—Մի գոռաք... չեմ վախենում: Շատերն են վրաս գոռացել, բայց անօգնւտ.— և գրաշարի աչքերը փայլեցին արի, անամօթ կրակով:—Ծշմարիտ է...—չարունակեց նա՝ մի ոտից միւս ոտի վրայ ծանրանալով և դառնալով արդէն հրատարակչին.— այդ ես դիտմամբ եմ խօսք աւելացրել...

—Լսո՞ւմ եք,—դարձաւ խմբագիրը ներկայ եղողներին:

—Իսկապէս դու այդ ի՞նչ բանի վրայ ես, սատանայի ճուտ!—կատաղեց յանկարծ հրատարակիչը:—Դու հասկանո՞ւմ ես արդեօք, թէ ինձ որքան վնաս պատճառեցիր:

—Ձեզ հօ ոչինչ... դեռ՝ կարծեմ՝ հատով վաճառումն աւելացրել եմ: Բայց ահա պարոն խմբագրին—իսկապէս... չատ էլ նպաստաւոր չէ այսպիսի մի խաղ:

Խմբագիրը կարծես քարացել էր բարկութիւնից. նա կանգնել էր այդ անվրդով և չար մարդու առաջ և լուռ փայլեցնում էր աչքերը՝ իրան յուզող զգացմունքներն արտայայտելու խօսքեր չը գտնելով:

—Բայց, եղբայր, չէ՞ որ այս բանի համար գլուխդ փորձանք կը գայ!..—չարախնդութեամբ ծոր տուաւ հրատարակիչը և յանկարծ մեղմանալով՝ ծնկներին խփեց:

Իսկապէս նա գոհ էր և՛ այդ դիպուածից, և՛ բանուորի յանդուգն պատասխանից. խմբագիրը նրան նայում էր մի տեսակ բարձրից՝ չ'աչխատելով թագցնել իր մտաւոր առաւելութեան մասին ունեցած գիտակցութիւնը, և ահա այժմ նա, այդ ինքնասէր և ինքնավստահ մարդը հողի հետ է հաւասարուած... և ո՞ւմ չ'նորճիւ:

—Քո այդ յանդգնութեան համար մենք քեզ ցոյց կը տանք, հոգեակա,— աւելացրեց նա։

—Գիտեմ, որ չէք ներիլ՝ իհարկէ, համաձայնեց գրաշարը։

Այս տոնը և այս խօսքերը նորից ազդեցութիւն գործեցին։ Գրաչարներն իրար երեսի նայեցին, մետրանպաժը յօնքերը բարձրացրեց և մի տեսակ կուշ եկաւ, խմբագիրը յետ քաշուեց սեղանի մօտ և ձեռները նրան յենելով, աւելի չիփթուած և վիրաւորուած, քան զայրացած, աչքերը յառած՝ նայում էր իր թշնամուն։

—Ի՞նչ է քո անունը,—հարցրեց հրատարակիչը՝ գրպանից հանելով յուշատետրը։

—Նիկոլկա Գվոզդե, Վասիլի Իվանովիչ,—արագ յայտարարեց մետրանպաժը։

—Դու, Մատնիչ Յուզայի լակէյ, լո՛իր, քանի որ քեզ չեն հարցնում,—խստութեամբ նայելով մետրանպաժին՝ ասաց գրաշարը։—Ես ինքս լեզու ունեմ, ես ինքս ինձ տեղ կը պատասխանեմ... Իմ անունն է Նիկոլայ Սեմէոնովիչ Գվոզդե։ Բնակւում եմ...

—Կը գտնենք,—խոստացաւ խմբագիրը։—Իսկ հիմայ կորիր։ Բոլորդ գնացէք...

Բարձրաձայն թխկթխկացնելով՝ գրաչարները լուռ դուրս եկան։ Գվոզդեը բոլորից վերջն էր գնում։

—Կայ... սպասիր... ասաց խմբագիրը հանդարտ, բայց որոշ և ձեռը մեկնեց Գվոզդեի ետեւից։

Գվոզդեը շուտ եկաւ նրա կողմը, ծալլ շարժումով յենուեց դրան կրնկին և մի րոպե յլորելով՝ իր յանդուգն աչքերը յառեց խմբագրի գէմքին։

—Լսիր, տես ինչ եմ ասում,—սկսեց խմբագիրը։—Նա ուզում էր անվրդով լինել, բայց չէր աջողւում. նրա ձայնը բեկւում էր, աղմուկի էր փոխւում։—Դու խոստովանուեցիր... որ այդ խայտառակութիւնն անելիս... ի նկատի ես ունեցել ինձ։ Այո՛, Նշանակում է, այս ինչ բան է,—վրէժդ ես հանում ինձանից։ Հարցնում եմ քեզ—ինչի՞ համար։ Դու հասկանում ես այդ։ Կարող ես ինձ պատասխանել։

Գվոզդեը թօթուեց ուսերը, չրթունքները ծռեց և գլուխը կախելով՝ մի րոպէաշափ լուռ մնաց։ Հրատարակիչն անհամբերութեամբ թխկացնում էր ոտը, մետրանպաժը վիզը երկարացրել էր, իսկ խմբագիրը կրծոտում էր բեղերը և ջղայնօրէն կոտրատում մատները։ Բոլորն սպասում էին։

—Ես, ասենք, կարող եմ ասել... Միայն ես ինչպէս ան-

կիրթ մարդ, գուցէ իմ ասածը հասկանալի չը լինի... Դէ՛հ, այն ժամանակ ներողութիւն կ'անէք!... Ահա՛ ուրեմն՝ բանն ինչպէս է։ Դուք գրում էք զանազան յօդուածներ, բոլորին խորհուրդ էք տալիս մարդասիրութիւն և այլ այսպիսի բաներ... Չեմ կարողանում ես ձեզ այս բոլորը մանրամասնօրէն տեսել—լաւ գիր չը գիտեմ... Դուք՝ ասենք՝ ինքներդ գիտէք, թէ ինչի մասին էք ամեն օր գրուցում... Է՛, դէ ես էլ կարդում եմ ձեր այդ յօդուածները։ Դուք մեզ բանուորներին մասին էք խօսում... Իսկ ես բոլորը կարդում եմ... Բայց ես զգում եմ կարգալուց, որովհետեւ այդ բոլորը դատարկ բաներ են միայն։ Անամօթութեան խօսքեր են միայն, Միտրիյ Պաւլովիչ... որովհետեւ դուք գրում էք—մի թալանիր, բայց ձեր տպարանում ինչեր են լինում։ Կիրեակովիւն անցեալ չաբաթ բանեց երեք օր ու կէս, աշխատեց երեք ութ երկու շահանոց և հիւանդացաւ։ Կինը դալիս է գրասենեակը փողի համար, բայց կառավարիչն ասում է նրան, որ ոչ թէ նրան պէտք է փող տալ, այլ նրանից պէտք է մի բոլորի քսան ստանալ—տուգանք։ Էս էլ քեզ մի թալանիր։ Դուք ինչո՞ւ այս բաների մասին չէք գրում։ Եւ ինչպէս կառավարիչը հաշում է և աշկերաններին ծեծում է ամեն մի դատարկ բանի համար... Դուք այս չէք կարող գրել, որովհետեւ դուք էլ այս «քաղաքականութեանն» էք հետեւում... Գրում էք, որ մարդիկ վատ են ապրում աշխարհքում, ուստի և, ես ասում եմ, դուք բոլորդ այդ գրում էք, որովհետեւ ուրիշ ոչինչ անել չէք կարող։ Պրծաւ գնաց... Ուստի և դուք ձեր քթի տակ ոչ մի զազանութիւն չէք տեսնում, բայց թիւրքական զազանութիւնները չատ լաւ պատմում էք։ Միթէ՞ դատարկ բաներ չեն այդ—ձեր այդ յօդուածները։ Ես վաղուց էի ուզում՝ ձեր ամօթի համար՝ ձեր յօդուածների մէջ մտցնել ճշմարիտ խօսքեր։ Այդ դեռ քիչ է։

Գլխաւորն իրան հերոս էր զգում։ Նա հպարտ դուրս ցցեց կուրծքը, գլուխը բարձր բռնեց և իր յաղթութեան հրճուանքը չը թաղցնելով՝ անթարթ նայում էր խմբագրին։ Իսկ խմբագրին ամուր սեղմուել էր սեղանին՝ ձեռներով պինդ բռնած այն, ետ թեքուել և մերթ գունատուում էր, մերթ կարմրում և միշտ ժպտում էր արհամարհանքով ու չփոթութեամբ, չար և հիւանդոտ։ Նրա լայն բացուած աչքերը յաճախ թարթում էին։

—Սոցիալիստ է, — վախով ու հետաքրքրութեամբ հարցրեց հրատարակիչը՝ կիսաձայն դիմելով խմբագրին։

Նա հիւանդոտ ժպտաց, բայց ոչինչ չը պատասխանեց և գլուխը թեքեց։

Մետրանպաժը գնաց լուսամուտի մօտ, ուր դրուած էր անագին ֆելդդենդրոնը մէջը մի փայտէ աման, որ սենեակի

յատակին տարածել էր ստուերը, ամանի յետեր կանգնեց և այնտեղից նայում էր բոլորի վրայ փոքրիկ, սև ու շարժուն՝ ինչպէս մկան՝ աչքերով։ Նրանցում ինչ որ անհամբեր ակնկալութիւն կար, և երբեմն վառւում էր ուրախ կրակ։ Հրատարակիչը նայում էր խմբագրին։ Վերջինս զգաց այդ գլուխը բարձրացրեց և մի անհանգիստ փայլ աչքերում, ջղային դող դէմքին՝ գոռաց հեռացող Գվոզդեի յետևից։

— Սպասեցէք... կացէք։ Դուք ինձ վերաւորել էք, Բայց դուք իրաւունք չ'ունէք... ես կարծում եմ, որ այդ զգում էք։ Ես չ'նորհակալ եմ ձեզանից ձեր... պարզ խօսելուն համար, բայց կրկնում եմ...

Նա ուզեց հեղնանքով խօսել, բայց հեղնանքի տեղ նրա խօսքերում հնչում էր ինչ որ անգոյն և կեղծ մի բան, և նա դադար առաւ՝ ցանկանալով պատրաստուել դիմադրութեան, որ արժան էր և՛ իրան, և՛ այդ դատաւորին, որի՝ իրան—խրմբագրին դատելու իրաւունքի մասին նա դեռ երբէք չէր մտածել։

— Հասկանալի է, — գլուխն օրօրեց Գվոզդեւը։ — Միայն նա է արդար, ով կարող է շատ բան ասել։

Եւ կանգնելով դրան մէջ՝ նա շուրջը նայեց դէմքի մի այնպիսի արտայայտութեամբ, որը պարզ ցոյց էր տալիս նրա անհամբերութիւնը հեռանալու այդտեղից։

— Ո՛հ, կացէք, — ձայնը բարձրացնելով և ձեռք վեր ուղղելով յայտարարեց խմբագիրը։ — Դուք ինձ վրայ մեղադրանք էք բարդում, բայց դրանից առաջ ինքնակամ պատժել էք ինձ՝ իբր թէ ձեր առաջ ունեցած մեղքիս համար... Ես իրաւունք ունեմ պաշտպանուելու և ձեզ խնդրում եմ լսել...

— Ախր դուք ինձ հետ ի՞նչ գործ ունէք։ Դուք հրատարակչի դէմ պաշտպանուեցէք, եթէ հարկաւոր է։ Իսկ ինձ հետ ի՞նչ պէտք է խօսէք։ Ձեզ վերաւորել եմ, ուրեմն հաշտարարի մօտ քաշ տուէք էլի։ Թէ չէ — ի՞նչ պաշտպանուել։ Մնաք բարով։ — Նա շուռ եկաւ և ձեռները մէջքին դնելով՝ դուրս գնաց դանլըճից։

Նա հագած էր մեծ կրունկներով ծանր կօշիկներ, նրանցով բարձր թխկթխկացնում էր, և նրա քայլերը խուլ արձագանգ էին տալիս խմբագրատան մեծ, սրահանման սենեակում։

— Է՛ս էլ քեզ պատմութիւն աշխարհագրութեան հետ, — բացականչեց հրատարակիչը, երբ Գվոզդեն իր ետևից չրխկացրեց դուռը։

— Վառիլի Իվանովիչ, ես այդտեղ խառը չեմ, այդ գործում... — խօսեց մետրանպաժը՝ յանցապարտօրէն ձեռները ետ տանելով, և զգոյշ մանր քայլերով մօտեցաւ հրատարակչին։ —

Ես կարգաւորում եմ շարուածքը և իսկի չեմ կարող իմանալ, թէ ինձ ինչ է տալիս օրապահը: Ես-ը՝ ողջ գիշերը ոտի վրայ... այստեղ եմ գտնուում, իսկ տանը կինս հիւանդ է, երեխաներին նայող չը կայ... երեքն են... Ես՝ կարելի է ասել՝ արիւնս քամում եմ ամսական երեսուն րուրու համար... Իսկ Ֆեոդոր Պաւլովիչին, երբ նրանք վարձում էին Գլոգլեին, ես ասել եմ. «Ֆեոդոր Պաւլովիչ, ասացի, ես Նիկոլին դեռ երեխայ ժամանակից եմ ճանաչում և պէտք է ձեզ ասեմ, որ Նիկոլկան կուարար է և գող, առանց խղճի մարդ է: Նրան արդէն հաշտարարի մօտ դատել են, ասացի, մինչև իսկ բանտ է նըստել...»

— Ինչի՞ համար է նստել, — մտադրազ հարցրեց խմբագիրը՝ նայելով պատմողին:

— Աղանիների համար-ը... այսինքն՝ ոչ թէ աղանիների համար, այլ փականների կոտորելու համար: Եօթ աղանետներին փականներ է կոտորել մի գիշեր-ը... և բոլոր աղանիներին աղատութիւն է տուել — բոլոր թռչուններին քշել է-ը: Իմ մի ջուխտ գորշագոյն աղանիներն ես էնպէս էլ կորան: Շատ հաղադիւտ թռչուններ էին:

— Գողացել է, — հետաքրքրութեամբ տեղեկացաւ հրատարակիչը:

— Ոչ, նա այդպիսի բաներ չէ անում: Դատի է ենթարկուել և՛ գողութեան համար, բայց արդարացրել են: Հէնց այնպէս — ըմբոստ է... Բայ թողեց թռչուններին, էլ ոչինչ պէտք չէ նրան, և ծիծաղում է մեզ վրայ... Նրան բանի՞ անգամ են ծեծել: Մի անգամ ծեծից յետոյ մինչև իսկ հիւանդանոց ընկաւ... Բայց երբ այնտեղից դուրս եկաւ, իմ սանամօր վառարանը սատանաներ գցեց:

— Սատանաներ, — զարմացաւ հրատարակիչը:

— Ի՞նչ անմտութիւն, — ուսերը թօթուեց խմբագիրը՝ ճակատը կնճռելով և նորից չթռնքները կծոտելով՝ մաքի տակ ընկաւ:

— Այս բոլորովին ճշմարիտ է, միայն այնպէս չ'ասացի, ինչպէս պէտք էր, — վիրաւորուեց մետրանոպօր — Նա, զիտէք, վառարանագործ է, այդ Նիկոլկան: Նա ամեն բան գլուխ է բերում. վիճաբութիւնից բան հասկանում է, փորագրիչ է, ջրանցք չինող էլ է եղել... Եւ ահա սանամէրս — նա սեփական տուն ունի, նա հողերով և դասակարգից է — նրան վարձեց վառարանը վերաշինելու: Է՛, նա ամեն բան չինեց, ինչպէս հարկաւորն էր, միայն թէ այդ անպիտանը վառարանի պատի մէջ էր գրել անդկով և ասեղներով լցրած մի շիշ... և էլի մի ինչ-որ բան էլ է

դրւում այնտեղ: Դրանից առաջանում է մի հնչիւն—այնպէս մի տեսակ, գիտէք, կարծէք տնքոց կամ հառաչանք լինի, և այն ժամանակ ասում են—տունը սատանայ է մտել: Հէնց որ վառարանը վառեցիր, մէկ էլ տեսար մեղիկը տաքացաւ շշում և ըսկսեց դէս-դէն թափառել: Իսկ ասեղները չափգոտում են շիշը, կարծես մէկը ատամները կրճտացնելից լինի: Բացի ասեղներից՝ էլի զանազան տեսակ երկաթի կտորտանքներ են դնում սընդկի մէջ, նրանք էլ են զանազան ձայներ հանում,—ասեղը ջոկ տեսակ, մեխը ջոկ տեսակ, և դուրս է գալիս մի տեսակ դիւտկան երաժշտութիւն... Սանամէքս մինչև անգամ ուզում էր տունը ծախել, բայց ոչ ոք չէ առնում,—դեների հետ ո՞վ կ'ապրի: Երեք անգամ մաղթանք է կատարել տունը ջրօրհնէքով—բան չէ դառնում: Լաց ու կոծ է անում կինը, հարսնացու աղջիկ ունի, մօտ հարիւր գլուխ հաւ ունի, երկու կով, լաւ անտեսութիւն... բայց այդ դեներն ամեն բան փչացնում են: Այնքան տանջուեց, չարչարուեց, որ մարդու խեղճը դալիս էր նրան տեսնելիս: Հէնց Նիկոլկան էլ նրան փրկեց՝ կարելի է ասել Տնւր, ասում է, յիսուն մանէթ—դեներին հալածեմ: Նա առաջ մի քսանհազարոց տուաւ, և յետոյ—երբ Նիկոլկան հանեց շիշը, և նա հասկացաւ բանը—էլ մնացածը չը տուաւ: Ծառ խելօք կին է, ուզում էր դանդաղտուել, բայց ևտկացրին... Վերջապէս այդ Նիկոլկան շատ օյինբազուժիւններ գիտէ:

—Եւ միայն այդ դուարճալի «օյինբազուժիւնների» պատճառով ես վաղուանից պէտք է տուժեմ: Ե՞ս,—ջղայնորէն բացազանչեց խմբագիրը և տեղից ցատկելով՝ նորից սկսեց սենեակովը վազվզել:—Օ՛, Աստուած իմ: Որքան անմիտ, կոպիտ, ստոր է այս բոլորը...

—Է՛-է, դուք էլ շատ եք դարդ անում,—հանդատացնող ևղանակով ասաց հրատարակիչը:—Կ'ուզէք, կը բացատրէք, թէ այդ ինչպէս է եղել... Անպիտանը շատ խեղկատակն է, գետինը մանի: Վառարանում դեներ է ընակեցրել, հա, հա: Զէ, Աստուած վկայ: Ցոյց տալը մենք նրան ցոյց կը տանք, բայց փուչը խելօք է և զարթեցնում է դէպի ինքը ինչ-որ մի... գիտէք—հրատարակիչը գլխից վեր մի չըթմա խփեց մատներով և հայեացքը գցեց առաստաղին:

—Զեղ այդ դուր է գալիս, հա,—սուր ձայն խմբագիրը:

—Է՛, ինչ կայ որ: Միթէ ծիծաղելի չէ: Զեղ էլ դրա դու պատւիրեցեր մի լաւ ուտացրեց: Խելօք գլուխ է անիծածը,— և հրատարակիչը հատուցեց խմբագրին նրա գոռոցի տեղը:—Ո՞ր յօդուածի հիման վրայ էք ուզում նրա հետ հաշիւ տեսնել: Խմբագիրն արագութեամբ մօտեցաւ հրատարակչին:

— Ես նրա հետ հաշիւ չեմ տեսնելու, այն: Չեմ կարող-ը՝, Վասիլիյ Իվանովիչ, որովհետեւ այդ դեւերի գործարանատէրն արդար է: Ձեր տպարանում՝ սատանան գիտէ՝ թէ ինչեր են կատարուում, դուք լսել էք: Իսկ մենք... Իսկ ես չը տեսնող եմ ձեռնում ձեր շնորհիւ: Նա հազար անգամ արդար է:

— Եւ այն յաւելուածի համար, որ մտցրել է ձեր յօդուածի մէջ, — կծու կերպով հարցրեց հրատարակիչը և հեղանքով սեղմեց շրթունքները:

— Ի՞նչ կայ որ, հէնց դրա համար էլ, այն: Հասկացէք, Վասիլիյ Իվանովիչ, ախր մենք ազատամիտ թերթ ենք...

— Որը տպագրուում է երկու հազար օրինակ, հաշուելով ձեր իններեւ ու փոխանակուողները, չոր կերպով աւելացրեց հրատարակիչը: — Իսկ մեր մրցակիցն ինն հազար է ցրում:

— Է՛, յեառջ:

— Ուրիշ ոչինչ:

Խմբագիրը յուսահատութեամբ թափ տուաւ ձեռքը և աչքերը խոնարհած՝ նորից սկսեց դահլճով յետ ու առաջ գնալ:

— Սքանչելի՛ դուրթիւն է, — փնթփնթաց նա՝ ուսերը թօթուելով: — Ինչ որ ընդհանուր մի յարձակում է: Բոլոր չները մէկի վրայ են թափուել, իսկ այդ մէկի դունչը կապած է: Հա՛, հա՛: Այդ թշուառական բան-նուորն էլ: Օ՛, Աստուած իմ:

— Աղբէր, թքեցէք գնա՛, մի՛ յուղուէք ա՛ն, — յանկարծ խորհուրդ տուաւ Վ. Իվանովիչը՝ պարզասրտութեամբ քմիծաղելով, կարծես յոգնած յուզմունքից և վիճաբանութիւններից: — Եղածը եղած է, ձեր պատիւն էլ նորից կը վերականգնէք: Այդ աւելի ծիծաղելի է, քան զբամատիկական:

Նա հաշտութեամբ մեկնեց իր գիրդ ձեռք խմբագրին և ուզում էր դահլճից դուրս գնալ գրասենեակը:

Յանկարծ գրասենեակը տանող դուռը բացուեց և շեմքին յայտնուեց Գիւղգիւր: Նա գլխարկով էր և մի տեսակ սիրալիրութեամբ ժպտում էր:

— Ես եկայ ձեզ ասելու, պարոն խմբագիր, որ եթէ դուք ցանկանում էք ինձ դէմ դառ բանալ, ասացէք, որովհետեւ ես այստեղից գնալու եմ, իսկ էտապով էլ վերադառնալ չեմ ուզում:

— Գնաւո՛ր կորիր, — ճղրթաց խմբագիրը՝ քիչ մնալով որ հեկեկայ և փախաւ սենեակի խորքը:

— Ուրեմն հաշիւներս վերջացած է, ասաց Գիւղգիւրը, գլխարկն ուղղեց և հանգիստ չուռ գալով շէմքում՝ անյայտացաւ:

— Օ՛-հ, անզգամ. — Վասիլիյ Իվանովիչը հիացմունքով չունչ

քաչեց Գփոզդերի ետեից և ուրախ ժպտալով՝ սկսեց չը շտապելով հագնել վերարկուն:

Նկարագրած դէպքից երկու օր յետոյ Գփոզդեր կապոյտ բլուզով, կաշուէ դօտին կապած, փողբերը վար թողած անդրափարտիքով, փայլուն սրբուած կօշիկներով, սպիտակ ծուռ դրած կարտուզով, խուլխուլոտ փայտը ձեռին, ծանրումեծօրէն զբօսնում էր «Սարում»:

Սարը ներկայացնում էր դէպի գետն իջնող մի զառիվայր: Վաղ ժամանակներում այդ զառիվայրում խիտ անտառ էր բուսած: Այժմ համարեան բոլորովին կտրաւում էր, և միայն տեղ-տեղ կոբովի, հաստարմատ կաղնիներն ու կնձենիները, որոնք կայծակնահար էին եղել, ցցել էին դէպի երկինք իրանց հին խոռոչաւոր բները՝ հանգոյցաւոր ճղները լայն փռելով: Ներանց արմատներին մօտ հիւսուել էին նրանց արմատներից աճած մատաղ բողբոջները, թփերը հարուել էին բներին, և ամեն տեղ կանաչկոտի մէջ զբօսնող ժողովուրդը կոխ էր տուել ոլորմոլոր շաւիղները, որոնք ցած էին իջնում դէպի արևի շողերով լցուած գետը: Հորիզոնաձև հատելով «Սարը»՝ գնում էր լայն ձեռնիկը, որ փոստի բարձի թողի արած ճանապարհն էր—և այնտեղ էր գլխաւորապէս զբօսնում ժողովուրդը՝ անցուղարձ անելով մի կարգը միւսին հակառակ:

Գփոզդերին միշտ դուր էր գալիս թափառել այդ ձեռնիկերով ետ ու առաջ բազմութեան հետ և զգալ իրան էլ այնպէս, ինչպէս և՛ բոլորը, նոյնպէս ազատ ծծել սաղարթի բուրմունքով լցուած օդը, նոյնպէս ազատ և ծոյլ շարժուել ու լինել մի մասը ինչ-որ մեծ բանի և իրան էլ բոլորին հաւասար զգալ:

Այդ օրը նրա քէֆը քիչ տեղն էր, և նրա վճռական չեչոտ դէմքը նայում էր պարզ և բարեկամաբար: Նրա ձախ քունքի վրայից դէպի վեր էին ոլորւում չէկ մազի փնջերը: Ականջին գեղեցիկ կերպով շուաք անելով՝ նրանք կանգնում էին գլխարկի շրջանակի վրայ՝ զոչաղ արհեստաւորի արի տեսք տալով Գփոզդերին, որը գոհ է իրանով, պատրաստ է իսկոյն և և թ երգել, պարել ու կուել և կարող է խմել, երբ ուզես: Կարծես բնութիւնը կամեցել է Նիկոլայ Գփոզդերին այդ բնորոշ մազի փնջիկներով ներկայացնել ամենքին իբրեւ մի կրակոտ տղայի և իր զինն իմացողի: Հաւանութեամբ նայելով շուրջը գորշագոյն աչքերով՝ Գփոզդեր միանգամայն բարեկամաբար բոթում էր ժողովրդին, առանց արտնջալու տանում էր նրանց հրոյնները, կանաչ շէնքները կոխելիս՝ քաղաքավարի ներողութիւն

էր խնդրում, ամենքի հետ միասին կլանում էր թանձր օդը և իրան շատ լաւ էր զգում:

Ծառերի սաղարթի արանքով երևում էր, թէ ինչպէս գետի միւս կողմում արեւ մարդագետխններից վեր էր քաղում: Երկինքն այնտեղ ծիրանի էր, ջերմ ու քնքոյշ, և մարդու քաշում էր այնտեղ, ուր նա իր ծայրը դիպցնում էր մարդագետխնների մուգ կանաչին: Զբօսողների ոտների տակ էին ընկնում նախշուն ստուերները, և մարդկանց բազմութիւնը կոխոտում էր նրանց՝ չը նկատելով նրանց գեղեցկութիւնը: Ծխախոտի դլանակը գեղեցիկ ձևով դնելով չրթուներների ձախ անկիւնում և ծխի քուլաները ծոյլ-ծոյլ գուրս հանելով աջ անկիւնով, Գլոզգերը դիտում էր ժողովրդին, զգալով իր մէջ բուռն ցանկութիւն խօսակցելու որեւէ մէկի հետ՝ առաջին մի դոյզ չիշ դարեջուր րեստորանում, որ գտնւում էր «Սարի» տակ: Ոչ մի ծանօթ չէր պատահում, իսկ նոր ծանօթութիւն հաստատելու էլ յարմար առիթ չէր ներկայանում: Հասարակութիւնը՝ չը նայած տօնին և դարնանային պայծառ օրին, մի տեսակ մոռնալ էր և չէր պատասխանում Գլոզգերի բարեկամական տրամադրութեանը, թէպէտ նա արդէն մի քանի անգամ իր հետ մի շարքում գնացող մարդկանց դէմքերին նայել էր բարեսիրտ ժպտով և նրանց հետ խօսակցութիւն սկսելու լիակատար պատրաստակամութեան արտայայտութեամբ: Յանկարծ ծոծրակների բազմութեան մէջ երևաց նրա աչքին խմբագրի—Դմիտրիյ Պաւլովիչ Իստոմինի՝ նրան լաւ ծանօթ հարթ խուզած և տափակ՝ կարծես տաշած—ծոծրակը: Գլոզգերը ժպտաց՝ յիշելով, թէ ինչ խաղ խաղաց այդ մարդու զլխին, և մեծ բաւականութեամբ սկսեց նայել Դմիտրիյ Պաւլովիչի մոխրագոյն ցած գլխարկին: Երբեմն խմբագրի զլխարկը ծածկւում էր միւս զլխարկների ետեւում, և այդ ինչ—որ պատճառով անհանդատացնում էր Գլոզգերին: Նա բարձրանում էր ոտների ծայրերի վրայ, փնտրելով այն՝ գտնում էր և նորից ժպտում:

Այդպէս՝ հետեւելով խմբագրին՝ նա գնում էր և յիշում այն ժամանակը, երբ նա—Գլոզգերը—փականագործի Նիկոլայ էր, իսկ խմբագիրը—տիրացունու Միտկա: Նրանք մի Միշկա ընկեր էլ ունէին, որին նրանք Շաքարաման էին անուանում: Մի Վասիկա ժուկով էլ կար, որ փողոցի ծայրի տան մէջ ընակուող աստիճանաւորի որդին էր: Լաւ տուն էր—հին, մամռապատ, կարկատած: Վասիկայի հայրը հիանալի աղաւնետուն ունէր: Տան բակում շատ յարմար էր գողլուկանի խաղալ, որովհետև Վասիկայի հայրը ժլատ էր և պահում էր բակում ամեն մի անպէտք իր—ինչպէս օրինակ՝ կոտորտուած կառքեր, տակառներ,

արկղներ: Հիմա Վասիկան գաւառում բժիշկ է, իսկ հին տան տեղը երկաթուղիական ապրանքատներն են գտնուում... Ուրիշ ընկերներ էլ կային, բոլորն էլ ութ-տաս տարեկան երեխաներ: Նրանք ամենքը ընտելոււմ էին այն ժամանակ քաղաքի ծայրում, Յետին Թաց փողոցում: ապրում էին իրար հետ սիրով, իսկ ուրիշ փողոցների երեխաների հետ մշտական թշնամի: Ամայացնում էին այգիներէն ու բանջարանոցները, վէպի էին տալիս, հոթի էին տալիս և ուրիշ խաղեր էին խաղում, սովորում էին ծխական դպրոցում... Այդ ժամանակից անցել էր քսանուհինգ տարու հափ...

Կար մի ժամանակ և—անցել էր, կային երեխաներ—նոյնպիսի խոսքերար ու կեղտոտ, ինչպէս և փականագործի Նիկոլիան, բայց այժմ դարձել էին նշանաւոր մարդիկ: Իսկ փականագործի Նիկոլիան խրուած մնաց Յետին Թաց փողոցում: Նրանք աւարտելով ծխական դպրոցը՝ մտան գիմնազիա, —նա չը մտաւ... Բայց լինչ կը լինի, որ խօսի խմբագրի հետ: Բարովիկ և խօսակցութիւն սկսել: Նախ և առաջ ներողութիւն ինչդրել խայտառակութեան համար և յետոյ խօսակցել—այնպէս, ընդհանրապէս, կեանքի մասին...

Խմբագրի գլխարկն անդադար Գլոգգի աչքերովն էր ընկնում՝ ասես նրան կանչելով դէպի ինքը, և Գլոգգը սիրա առաւ: Հէնց այդ ժամանակ խմբագիրը մենակ անցնում էր մի ազատ տեղով, որ գոյացել էր հասարակութեան միջում: Նա քայլում էր բաց գոյնի անդրափարաիք հագած իր բարակ ոտներով, զլուին անդադար պտտում էր մի կողմից միւս կողմ, կարծատես աչքերը հասարակութեանը նայելիս սեղմում էին: Գլոգգը համարեա հուսաարուեց և կողքից սիրալիբ կերպով մտիկ էր տալիս նրա դէմքին՝ սպասելով յարմար ըստէի, որ բարովի, և միևնոյն ժամանակ սաստիկ ցանկութիւն զգալով իմանալու, թէ խմբագիրն ինչպէս կը վերաբերուի դէպի նա:

—Բարով, Միտրից Պաւլովիչ:

Խմբագիրը դարձաւ դէպի նա, մի ձևով բարձրացրեց զլխարկը, միևսով քթի վրայ ուղղեց ակնոյնները, դիտեց Գլոգգին և խոժոռուեց:

Բայց այդ չը չփոթեցրեց Նիկոլայ Գլոգգին, —ընդհակառակն՝ նա ամենագուրեկան ձևով կոացաւ դէպի խմբագիրը և օղու հոտ փչելով՝ հարցրեց.

—Զրօնում եք:

Խմբագիրը մի վայրկեան կանգ առաւ. նրա չրթունքներն ու ուռնդները զգուանքով դողացին, և նա սառնօրէն ասաց Գլոգգին.

—Ի՞նչ էք ուզում:

—Ե՞ս: Ոչինչ: Ես հէնց այնպէս... այսօր լաւ է: Եւ ես շատ ցանկանում եմ ձեզ հետ քիչ խօսել այն դէպքի առիթով:

—Ես չեմ կամենում ձեզ հետ ոչ մի բանի մասին խօսել,— յայտնեց խմբագիրը՝ քայլերն արագացնելով:

Գլոզգեր նոյնն արաւ:

—Ձեք ցանկանում: Հասկանում եմ... Դուք իրաւունք ունէք, ես այդ շատ լաւ եմ հասկանում... որովհետեւ ես ձեզ վերաւորել եմ, ուստի՝ իհարկէ՝ դուք պէտք է որ ինձ վրայ բարկացած լինէք...

—Դուք ուզղակի... դուք հարբած էք...—նորից կանգ առաւ խմբագիրը:—Եւ եթէ դուք հանդիստ չէք թողնիլ, ես ստիկանութիւն կը հրաւիրեմ:

Գլոզգեր քաղցրութեամբ ծիծաղեց:

—Է՛, ինչի համար:

Խմբագիրը խէթ-խէթ նայեց նրան մի այնպիսի մարդութեամբ հայեաքցով, որն ընկնում է անախորժ գրութեան մէջ և չը գիտէ, թէ ինչպէս դուրս գայ: Հասարակութիւնն արդէն նայում էր նրանց հետաքրքրութեամբ: Մի քանի դէմքեր ուշադրութիւն դարձրին՝ զգալով սկսուող խայտառակութիւնը: Իստոմինն անդօր նայում էր շուրջը:

Գլոզգերն այդ նկատեց:

—Եկէք մի կողմ ծոռենք,—ասաց նա,—և չը սպասելով համաձայնութեան՝ ուսովն արագութեամբ քշեց Իստոմինին լայն ծառուղուց նեղ շաւիղը, որ թփերի միջով իջնում էր սարից ներքև:

Խմբագիրն այդ մանէովրի դէմ բողոք չը յայտնեց,—գուցէ այն պատճառով, որ ժամանակ չ'ունեցաւ, բայց գուցէ և այն պատճառով, որ հասարակութիւնից դուրս, մեն-մենակ յոյս ունէր շուտ և հեշտ ազատուել իր գրուցընկերից: Նա հանդարտ, զգոյշ դէմ տալով փայտը գետնին՝ գնում էր շաւղով ցած, իսկ Գլոզգեր հետևում էր նրան և չնչում նրա պիտակի վրայ:

—Սհա այստեղ մօտիկ մի զրորւած ծառ կայ, նրա վրայ կը նստենք... Դուք, Միտրից Պաւլովիչ, մի բարկանաք վրաս իմ արարքի համար: Ներեցէք: Ախր ես չարացած էի... Բանուորականի արտում երբեմն այնպիսի չարութիւն է վառուում, որ գինով էլ չէ կարելի հանգցնել... Է՛, այդպիսի ժամանակ էլ մէկին խայտառակութեան ես ենթարկում: Կամ որեւէ անցորդի ունին ես ջարդում, կամ մի ուրիշ բան... Ես չեմ զղջում—ինչ եղել է, եղել է, բայց գուցէ ես մինչև անգամ շատ լաւ հասկանում եմ, որ չարից դուրս եմ արել... Սահմանից անցել եմ:

Արդեօք զգացուե՞լ տուաւ խմբագրին այդ անկեղծ բացատրութիւնը, և Գլոզգէի անձնաւորութիւնը նրա մէջ հետաքրքրութիւն զարթեցրեց, թէ՛ նա հասկացաւ, որ այդ մարդու ձեռքից չի ազատուելու, բայց և այնպէս նա հարցրեց Գլոզգէին.

— Ինչի՞ մասին էք ուզում խօսել:

Հէնց այնպէս... ամեն բանի մասին: Վշտանում է հոգիս, որովհետեւ ես ինձ զրկուած եմ զգում... Ահա այստեղ նստե՛նք:

— Ես ժամանակ չ'ունեմ...

— Ես գիտեմ... թերթը: Նա ձեր կեանքի կէսը կը մաշի, ձեր բոլոր առողջութիւնը նրա վրայ կը վառնէք: Չէ՞ որ ես հասկանում եմ: Իսկ նա, հրատարակիչը, նրան ինչ: Լրագիրը նրա համար փող է, իսկ ձեզ համար արիւն: Արդէն ձեր աչքերն էլ փչացրել էք... Նստեցէք:

Նրանց առաջ շաղկում ընկած էր մի մեծ կոճղ—երբեմն հսկայ կաղնու կիսափուտ մնացորդը: Ընկուզենու ճիւղերը կրողները էին ծառի վրայ՝ կաղմելով կանաչ ծածկոց, ճղների արանքով փայլիլով էր երկինքը, որ արդէն պատել էր արեմուտքի գոյներով: Թաթմ սաղարթի ախորժ բոյրով լցուել էր օդը: Գլոզգէն նստեց և դառնալով խմբագրին, որը դեռ կանգնած էր՝ երկմտութեամբ շուրջը նայելիս, նորից խօսեց.

— Ես այսօր քիչ եմ խմել... Չանձրացել եմ ապրելուց, Միտրիյ Պաւլովիչ: Իմ ընկեր բանուորներից ես ետ եմ մնացել կարծես, իմ մտքի ուղղութիւնը բոլորովին ուրիշ է: Ձեզ այսօր տեսայ և յիշեցի, որ ախր դուք էլ իմ ընկերն էիք... հա, հա:

Նա ծիծաղեց, որովհետեւ խմբագիրը նայում էր նրան դէմքի արտայայտութիւնների այնպիսի արագ փոփոխութեամբ, որը նրան իսկապէս ծիծաղելի էր դարձնում:

— Ընկեր: Ե՞րբ:

— Վաղուցուայ բան է, Միտրիյ Պաւլովիչ... Այն ժամանակ դեռ մենք Յետին Թաց փողոցումն էինք կենում... Յիշում էք: Մի բակ էր միայն բաժանում մեզ: Իսկ մեր գէմուղէմ՝ Միշկա Շաքարաման էր—այժմեան ժամանակ Միխայիլ Եֆիմովիչ Խրուշ, դատաստանական քննիչ—որ բարեհաճում էր ընակութիւն հաստատած լինել իր խիստ հօր մօտ... Յիշում էք Եֆիմովիչին: Նա շատ անգամ է իմ ու ձեր մազերից բաշել... Բայց դուք նստեցէք:

Խմբագիրը դրականապէս զլխով արաւ և նստեց Գլոզգէի կողքին: Նա նայում էր նրան այնպիսի մի մարդու լարուած

հայցաքննողի որ յիշում է ինչ-որ վաղուց և բոլորովին մոռացուած բան, և չիմում էր ճակատը:

Իսկ Գովողներ տարուել էր յուշերով:

— Ի՜նչ կեանք էր այն ժամանակ: Եւ ինչո՞ւ մարդս իր ամբողջ կեանքում երեխայ չէ մնում: Մեծանում է... ինչո՞ւ: Յետոյ հող է մտնում: Իր բոլոր կեանքում զանազան դժբախտութիւններ է կրում... Հարանում, գաղանանում... անհեթեթ բան է: Ապրում է, ապրում և—վերջ ի վերջոյ յիմար բան է դուրս գալիս... Դադաղ և... ուրիշ ոչինչ... Իսկ այն ժամանակ մենք ապրում էինք առանց որեւէ մութ մաքի, ուրախ, իսկ և իսկ թողունները պէս: Յանկապատերով ցատկաւում էինք ուրիշների աշխատանքի պտուղները գողանալու... Յիշում էք, մի անգամ Պետրովսկայի բանջարանոցում գողութեան մէջ ես մի վարունկ տուի ձեր քթին: Դուք աղաղակ բարձրացրիք, բայց ես պոկ եկայ... Դուք ձեր մօր հետ եկաք հօրս մօտ—գանգատ, և հայրս ինձ քթիկեց ինչպէս հարկն է... Իսկ Միշկան, Միխայիլ Եֆիմովիչը...

Խմբագիրը լսում էր և ակամայ ծիծաղում, նա կ'ուզէր լրջութիւնն ու արժանիքը պահպանել այդ մարդու առաջ, որ հակում էր ցոյց տալիս գէպի ընկերական մօտիկ վերաբերմունք: Բայց մաքուր օրերի մասին այդ պատմութիւններում կար ինչ-որ սրտաշարժ բան, և Գովողների խօսակցութեան ձևի մէջ դեռ այնպէս սուր կերպով չէին հնչում նոտեր, որոնք վիրաւորել սպառնային Դմիտրիյ Պաւլովիչի ինքնասիրութիւնը: Չորս կողմն էլ լաւ էր: Բարձրում զրօսնող հասարակութեան ոտները քսւում էին ճանապարհի անաղին, խուլ ձայներ էին գալիս, երբեմն հնչում էր ծիծաղը. բայց հառաչում էր քամին—և այդ բոլոր թոյլ հնչիւնները մարում էին սաղարթի մեղամաղձոտ չրչիւնի մէջ: Իսկ երբ չրչիւնը լսում էր, խորին խաղաղութեան վայրկեաններ էին լինում, չորս կողմը կարծես ամեն բան ուշ էր գնում Նիկոլայ Գովողների խօսքերին, որը կցկտուր կերպով պատմում էր երիտասարդութեան պատմութիւնը...

— Յիշում էք Վար'կային, ներկարար Կոլոկոլ'ցիի աղջկան: Այժմ նա մարդու է գնացել տաքարանատէր Շապոշնիկովին: Այնպիսի տիրուհի է—մօտով անցնել չէ լինում... Այն ժամանակ նա մի հիւանդոտ փոքրիկ աղջիկ էր... Յիշում էք, նա մի անգամ կորաւ, և մեր փողոցի բոլոր երեխաներս գնացինք որոնելու նրան դաշտում ու ձորերում! Զօրաբանակում գտանք և դաշտի միջով տուն բերինք... Որքան աղմուկ բարձրացաւ: Կոլոկոլ'ցիը մեզ շաքարահացով հիւրասիրեց, իսկ Վար'կան իր մօրը տեսնելով ասաց. «Ես սպայի տիկնոջ մօտ էի, և նա ինձ ու-

զուժմ է իրան աղջկացու վերջնել» Հէ, հէ... Աղջկացու վերջը-
նել... Հիանալի փոքրիկ աղջիկ էր...

Գետից հասնում էին ինչ-որ հնչիւններ, — կարծես մեղմ հառաչում էր մէկի կարող, թախծոտ կուրծքը Շողենաւը զը-
նում էր, և օգուժ լողում էր ջրի աղմուկը, որը ձեղքւում էր
նրա անիւներով: Երկինքը վարդադոյն էր, իսկ Գլոգդեի ու խըմ-
բագրի շուրջը խառնում էր խաւարը: Դանդաղօրէն վրայ էր
հասնում դարնահային գիշերը: Խաղաղութիւնը դառնում էր
կատարեալ, խորին, և Գլոգդե կարծես նրան ննթարկուելով՝
իջեցրեց ձայնը... Խմբագիրը լուռ լսում էր նրան՝ իր յիշողու-
թեան մէջ վերադառնալով վաղ անցեալի աղօտ պատկերները:
Այդ բոլորը եղել էր... Եւ այդ բոլորն աւելի լաւ էր, քան այժմ:
Միայն մանուկ հասակում է հնարաւոր ունենալ ազատ հոգի, որ
չէ նկատում այն շղթաների ծանրութիւնը, որոնք կոչւում են
կեանքի պայմաններ: Մանկութեանն անծանօթ են խղճի սուր
բորբոքումները, շատ կեղծիքներ էլ ծանօթ չեն՝ բացի ման-
կական անշնաստիկար ստից: Մանկութեան օրերում որքան շատ
բան կայ անյայտ, և ինչպէս լաւ է այդ անյայտութիւնը: Ապ-
րում ես — աստիճանաբար ընդարձակւում է կեանքի մասին ու-
նեցած հասկացողութիւնդ... Ինչո՞ւ է այն լայնանում, քանի որ
մեռնում ես՝ դեռ ոչինչ չը հասկացած:

— Այդպէս ուրեմն, Միտրից Պաւլովիչ, բանից դուրս է
գալիս, որ ես ու դուք միեւնոյն պարտիզի ծաղիկներ ենք...
այո: Բայց մեր հոտերը զանազան են... Եւ հէնց որ յիշում եմ,
որ իմ և իմ մի ժամանակուայ ընկերներիս մէջ եղած բոլոր տար-
բերութիւնը նրանումն է միայն, որ ես գիմնադրւում չեմ սովո-
րել, — դառն է թւում ինձ կեանքը և վատ... Միթէ մարդութիւնը
դրանում է: Մարդութիւնը հոգումն է, դէպի իր մերձաւորն
ունեցած զգացմունքների մէջն է, ինչպէս ասուած է... Տե-
սէք — դուք իմ մերձաւորն էք, բայց ես ինչ գիմ ունեմ ձեր աչ-
քում: Ո՛չ մի, — ճշմարիտ է:

Խմբագիրն իր մտքերով տարուած՝ չը լսեց երևի իր զրույ-
ցնկերի հարցը:

— Ծշմարիտ է, — ասաց նա անկեղծ ու յրուած տոնով:
Բայց Գլոգդեը ծիծաղեց, և նա ուչքի եկաւ:

— Այսինքն, սպասեցէք: Ի՞նչն է իսկապէս ճշմարիտը:

— Այն, որ ես ձեզ համար մի աւելորդ բան եմ... Կամ ես,
թէ չէ, այդ միեւնոյնն է ձեզ համար, — ձեր հոգը չէ: Չեր ին-
չին է հարկաւոր իմ հոգին: Մենակ ես ապրում եմ աշխար-
հում և ինձ ճանաչող բոլոր մարդկանց ճանճրացրել եմ:
Այն պատճառով, որ իմ ընաւորութիւնը չար է, և ես շատ եմ

սիրում զանազան օյինըագութիւններ անել: Բայց այնպիսի չէ, որ ես էլ զգացմունք ունեմ, խելք էլ ունեմ... Ես ինձ զրկուած եմ զգում իմ գրութեան մէջ: Ես ձեզանից ինչով եմ վատ: Միայն իմ պարապմունքով...:

—Աւայո, այդ ցաւալի է,—ասաց խմբագիրը ճակատը կնճռելով, լռութիւն պահպանեց և չարունակեց մի տեսակ հանգըստացուցիչ և զանաւակով.—Բայց զիտէք, այդտեղ պէտք է վերցընել ուրիշ տեսակէտ...:

—Միտրիյ Պաւլովիչ: Տեսակէտի ինչ կարիք կայ: Ոչ թէ որեւէ տեսակէտից պէտք է մարդը մարդուն նշանակութիւն տայ, այլ սրտի թելադրածի համեմատ: Ի՞նչ բան է տեսակէտը: Ես խօսում եմ կեանքի անարդարութեան մասին: Միթէ կարելի է ինձ որեւէ տեսակէտից անպէտք համարել: Բայց ես անպէտք եմ համարուած կեանքում—նրանում ինձ տեղ չեն տալիս... Ինչու՞ր: Որովհետեւ կարդացած չեմ: Բայց ասիւր եթէ դուք ուսումնականներդ ոչ թէ որեւէ տեսակէտից դատէիք, այլ մի ուրիշ կերպ, պարտաւոր էք ինձ—ձեր խմբին պատկանողիս չը մոռանալ և ձեզ մօտ բարձրացնել ներքեկից, ուր ես փթում եմ տղիտութեան և իմ զգացմունքների չարութեան մէջ: Կամ դուցէ որեւէ հայեցակէտից պարտաւոր չէք:

Գլուզգիւր կուշ ածեց աչքը և յաղթութեան հրճումանքով նայեց իր խօսակցի դէմքին: Նա—իրան զգում էր լեզուն բացուած և արագերում էր իր միջից իր ամբողջ փիլիսոփայութիւնը, որ խորհել էր իր վաստակաւոր, անփայտ ու անպտուղ կեանքի երկար տարիներում: Խմբագիրը չփութուած էր զրուցւորների յարձակումով և աշխատում էր միաժամանակ որոշել, թէ այդ ինչ մարդ է, և թէ նա ինչ պատասխանէ նրա խօսքերին: Իսկ Գլուզգիւր ինքն իրանով հարբած՝ չարունակեց.

—Դուք խելօք մարդիկ էք, ինձ հարիւր պատասխան կը տաք, և բոլորն էլ կը լինի—սէ, պարտաւոր չենք: Իսկ ես ասում եմ—պարտաւոր էք: Ինչու: Որովհետեւ թէ ես և թէ դուք մի փողոցում բնակուող մարդիկ եք և նոյն ծագումն ունենք... Դուք կեանքի իսկական տէրերը չէք, ազնաւիաններ չէք... Նըրանցից մեղպէսները խէր չ'ունեն: Նրանք կ'ասեն. «գնա՛ կորիւր»—և կը գնաս: Որովհետեւ նրանք—հնուց արիստոկրատներ են, իսկ դուք այն պատճառով էք արիստոկրատ, որ քերականութիւն գիտէք եայլն... Բայց դուք—մերոնցից էք, և ես կարող եմ ձեզանից պահանջել, որ ցոյց տաք ինձ իմ կեանքի ուղին: Ես մէջսանին եմ, իրուկն էլ նոյնպէս, դուք էլ—տիրացուի որդի էք...

—Բայց թնյլ տուէք, — խնդրանքով ասաց խմբագիրը, — միթէ ես բացատում եմ ձեր պահանջելու իրաւունքը...

Բայց Գլոգգեր բոլորովին չէր հետաքրքրւում, թէ ինչ է բացատում և ինչ է ընդունում խմբագիրը. նա կարիք էր զգում արտայայտել իր միտքը, և նա զգում էր իրան այդ մոմենտին ընդունակ ասելու այն բոլորն, ինչ որ երբեիցէ նրան յուզել է:

— Ոչ, դուք թնյլ տուէք, — արդէն մի տեսակ խորհրդաւոր շշուկով ասում էր նա՝ մօտիկ կոանալով դէպի խմբագիրը և վրդովուած աչքերը փայլեցնելով: — Ինչպէս էք կարծում, հեշտ է բանել իմ այն ընկերների համար, որոնց քթերն էի ջարդոտում մի ժամանակ: Հեշտ բան է ինձ համար պարոն դատաստանական քննիչ Խրուլեից, որի արտաքնոցը մօտ մի տարի առաջ չինեցի, քառասուն կոպէկ ստանալ թէյագին: Չէ՞ որ նա միևնոյն չրջանի մարդ է, ինչ որ ես... Եւ նրա անունն էլ Միշկա Շաքարաման էր... նրա ատամները փթած են հէնց հիմայ էլ, ինչպէս այն ժամանակ էին...

Նրա կոկորդին ինչ-որ ծանր, խեղդող բան դէմ ընկաւ. նա լուեց մի վայրկեան և ապա սկսեց յիշոցներ տալ — այնպէս բարձր ու զգուշից-ցինիկ, որ խմբագիրը ցնցուեց և յետ քաշուեց նրանից: Հայհոյելով Գլոգգեր յանկարծ մի տեսակ թուլացաւ, ասես կրակը հանգաւ նրա մէջ, նա ինքն իրան ականջ դրաւ և այլևս չը գտաւ իր ներսում այնպիսի բան, որ նա ցանկանար ասել:

— Վերջացրի ամեն ինչ — խուլ արտասանեց նա:

Յանկարծ նրա հոգում մի դատարկութիւն գոյացաւ, և դատարկութեան այդ զգացումը նրան զրգուում էր:

Խմբագիրը խոհուն հայեացքով նայում էր նրան կողքից և լուռ պատկերացնում, թէ ինչ ասել այդ տղային: Պէտք էր մի լաւ, ճշմարիտ և անկեղծ բան ասել: Բայց ներկայ վայրկեանին ոչ մի պէտքական բան չը գտնուեց Գմիտրիյ Պաւլովիչ Իստոմինի՝ ոչ գլխում, ոչ սրտում: Վաղուց արդէն բոլոր իդէական և վսեմ խօսակցութիւնները «հարցերի» մասին՝ առաջ էին բերում նրա մէջ ձանձրոյթի և յոգնածութեան զգացում: Նա այսօր դուրս էլ եկել հանգստանալու, դիտմամբ խուսափում էր ծանօթներին հանդիպելուց և յանկարծ լոյս ընկաւ այդ մարդն իր ճառերով: Իհարկէ՝ նրա խօսքերում, որպէս և՛ մարդկանց ասած բոլոր բաներում՝ կայ ճշմարտութեան որոշ մաս: Այդ խօսքերը հետաքրքիր են և կարող էին ֆելըետոնի համար իբրև շատ հետաքրքիր թեմա ծառայել... Բայց այնուամենայնիւ պէտք է ախր մի որևէ բան ասել նրան:

— Այն բոլորն, ինչ որ դուք ասացիք — նոր չէ, գիտէք —

սկսեց նա:—Մարդու գէպի մարդն ունեցած յարաբերութիւններն անարդարութեան մասին վաղուց է խօսուում... Բայց և այնպէս ձեր այդ խօսքերը նորութիւն են ներկայացնում այն մտքով, որ առաջ ասել են ուրիշ տեսակի մարդիկ... Դուք միակողմանի և անձիշտ էք ձևակերպում ձեր խոհերը... Բայց...

—Կրկին ձեր հայեցակէտը,—թոյլ-թոյլ ծիծաղեց Գվոզդերը—Հնչ-հնչ, պարոններ, պարոններ: Ձեզ խելք պարզուած է, բայց սիրտ երևի... Դուք ինձ մի այնպիսի բան ասացէք, որ միանգամից սրտով լինի... հա:

Նա այս ասաց և գլուխը խոնարհելով՝ պատասխանի էր սպասում: Նրան տիրել էր թախիծը:

Իստովինը նորից նայեց նրան՝ ճակատը կնճռելով և հեռանալու սաստիկ ցանկութիւն զգալով: Նրան թւաց, թէ Գվոզդերը հարբում է, այդ պատճառով է այնպէս թթուել իր վրդովուած խօսքերից յետոյ: Նա նայեց Գվոզդերի սպիտակ գլխարկին, որ իջել էր ծոծրակի վրայ, չեչոտ թշին և ցցուած մազի վնջին, հայեացքով չափեց նրա ամբողջ ուժեղ ջլտտ արտաքինը և մտածեց նրա մասին, որ նա շատ տիպիք բանուոր է և եթէ որ...

—Հը՛, ինչ եղաւ,—հարցրեց Գվոզդերը:

—Է՛, ես ինչ կարող եմ ասել ձեզ: Պարզ ասեմ, ես շատ էլ որոշ չեմ կարողանում երեակայել, թէ դուք իսկապէս ինչ կ'ուզէիք լսել:

—Բանն էլ հէնց այդ է է... Դուք ինձ ոչինչ չէք կարող պատասխանել,—քմծիծաղեց Գվոզդերը:

Խմբագիրը թեթեւացած շունչ քաշեց՝ հաւանօրէն ենթադրելով, որ խօսակցութիւնը վերջացած է, Գվոզդերն այլևս նրա ետևից չէ կպչելու իր հարցերով... Եւ յանկարծ նա մտածեց.

—Իսկ եթէ նա ինձ ծեծի: Նա այնպէս չար է:

Նա յիշեց Գվոզդերի գէմքի արտայայտութիւնն այնտեղ, խմբադրատանը, այն անմիտ տեսարանի փամփնակ: Եւ նա կասկածանքով խէթ-խէթ նայեց նրա վրայ:

Արդէն մութ էր: Խաղաղութիւնը վրդովուում էր հեռու—գետից լսուող երգի հնչիւններով: Երգում էին խմբովին և տենոր ձայները լսում էին բոլորովին որոշ: Մեծ-մեծ բզէզները մետաղաման գնդացիներով թռչում էին օդում: Ծառերի սաղարթի արանքով երևում էին աստղերը... Երբեմն այս կամ այն ճիւղը գլխների վրայ ինչ-որ պատճառով ցնցւում էր, լսում էր տերևների մեղմ սոսաււններ:

—Կարծեմ ցօղ կը լինի...—ասաց խմբագիրն զղուշութեամբ:

Գլուզդեր ցնցուեց և երեսը դարձրեց դէպի նա:

— Ի՞նչ ասացիր դուք:

— Յօղ է լինելու, ասում եմ, վնասակար է այդ...

— Ա՛հ:

Քիչ լուռ մնացին: Գետի վրայ հնչեց.

— Է՛-էյ: Բարժի վրայ է...

— Ես ուզում եմ հնալս ծ'տեսութիւն...

— Մի դոյզ չի՞ դարեջուր չը խմենք, — ատաջարկեց յանկարծ Գլուզդեր և ծիծաղելով աւելացրեց. — Պատի՛ւ արէք:

— Ո՛չ, ներեցէք, ես այս ժամանակ չեմ կարող. եւ յետոյ՝ ժամանակ է ինձ, գիտէք...

Գլուզդեր վեր կացաւ կոճղից և խստութեամբ նայեց խումբազրին:

Վերջինս ձեռքը նրան մեկնեց՝ նոյնպէս վեր կենալով:

— Չէք ցանկանում ուրեմն ինձ հետ դարեջուր խմել: Դէ՛հ, աստանան ձեզ հետ, — վճռականապէս ասաց Գլուզդեր՝ կտրուկ շարժումով իր գլխարկը թեքելով: — Արիստոկրատիա: Զուխար մի գրոշ է: Ես մենակ էլ կը խմեմ:

Խմբադիրն արիութեամբ երեսը դարձրեց դէպի իր խօսակիցը և շաւղով վեր գնաց՝ ոչ մի խօսք չ'ասելով: Գլուզդերի մօտով անցնելիս՝ նա տարօրէն գլուխն ուսերը քաշեց, ասեւ վախենում էր նրա օրեւէ բանին գիպելէ: Գլուզդեր խոշոր քայլերով ուղղուեց սարից վայր:

Գետից լսւում էր ճղրթող ձայնը.

— Բարժի վրա՛յ է: Սատանանե՛ր: Նաւա՛ն-կը տու՛ն-նւր:

Եւ ծառերի մէջ տարածւում էր մեղմ արձագանդը.

— Օ՛—նւ՛նւ՛նւ՛...

Թարգմ. Ա. Ա.Թ.Ա.ՅԵԱՆ